# Հայտ ներկայացնելու հրավեր

Հայաստանի Հանրապետություն

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության դրամաշնորհային ծրագիր

Դրամաշնորհի № TF0A3230

**Գյուղատնտեսական սարքավորումների մատակարարում Ջերմուկ և Զառիթափ համայնքների համար**

Մրցույթի համար՝ SG-01

1. Հայաստանի Հանրապետությունը ստացել է ֆինանսավորում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության դրամաշնորհային ծրագիրը իրականացման համար և նախատեսում է գումարի մի մասով իրականացնել **Գյուղատնտեսական սարքավորումների մատակարարում Ջերմուկ և Զառիթափ համայնքների համար**՝ բաղկացած տասնչորս լոտից պայմանագիրը: Մրցույթը կընթանա Համաշխարհային Բանկի՝ մասնակցելու իրավասության կանոններով և ընթացակարգերով:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը սույնով հրավիրում է իրավասու հայտատուներին ներկայացնել կնքված հայտեր՝

*Զառիթափ համայնք՝*

*Լոտ 1՝ 1 Հացահատիկային Կոմբայն*
*Լոտ 2՝ 2 Անիվավոր տրակտոր Ա*
*Լոտ 3՝ 2 Անիվավոր տրակտոր Բ*
*Լոտ 4՝ 2 Անիվավոր տրակտոր Գ*
*Լոտ 9՝ 1 Կցորդ խոտի մամլիչ-հակավորիչ*
*Լոտ 10՝ 1 Ազոտային գութան*
*Լոտ 12՝ 2 Ձեռքի խոտհնձիչ*
*Լոտ 13՝ 2 Տրակտորի կախովի փոցխ*

*Ջերմուկ համայնք՝*

*Լոտ 2՝ 1 Անիվավոր տրակտոր Ա*
*Լոտ 5՝ 1 Անիվավոր տրակտոր Դ*
*Լոտ 6՝ 1 Թրթուրավոր տրակտոր ռոտորային ձյունմաքրիչով*
*Լոտ 7՝ 1 Թրթուրավոր տրակտոր թեքվող հրիչով*
*Լոտ 8՝ 2 Կախովի օդափոխիչային սրսկիչ*
*Լոտ 9՝ 1 Կցորդ խոտի մամլիչ-հակավորիչ*
*Լոտ 11՝ 1 Խոտհնձիչ մատնա-սեգմենտային*
*Լոտ 12՝ 2 Ձեռքի խոտհնձիչ*
*Լոտ 14՝ 1 Ինքնագնաց խոտհնձիչ*

Առաքման ժամանակահատվածը կազմում է **45-60** օր:

3. Հայտատուները իրավունք ունեն մասնակցել մեկ կամ ավելի մրցույթներին (լոտեր) ինչպես սահմանված է մրցութային փաստաթղթում: Հայտատուները իրավասու են

առաջարկել զեղչեր  մեկից ավել պայմանագրերին դիմելու դեպքում: Այդ զեղչերը պետք է ընդգրկված լինեն մրցութային հայտում:

4. Մրցույթն անցկացվելու է Ազգային մրցակցային գնման ընթացակարգով Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում «Ապրանքների, Աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնում» ուղեցույցի համաձայն («Գնումների ուղեցույց» հունվար, 2011թ.,  փոփոխված 2014թ:), և հայտ կարող են ներկայացնել բոլոր իրավասու հայտատուները, ինչպես սահմանված է Գնումների ուղեցույցում: Պետք է նաև հաշվի առնել 1.6 և 1.7 կետերը, որոնցով սահմանվում են շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականությունը:

7. Հայտերը պետք է ներկայացվեն **միայն** էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով ամենաուշը **2017թ-ի հոկտեմբերի 25-ին, ժամը 12:00-ին**: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում Համակարգի կողմից:

8. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն «Հայտի ապահովման հայտարարագրով»: Յուրաքանչյուր լոտի հայտը պետք է ուղեկցվի առանձին Հայտի ապահովման հայտարարագրով: